



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ [info\\_yeghegnadzor@aarhus.am](mailto:info_yeghegnadzor@aarhus.am), [narekbeg@yahoo.com](mailto:narekbeg@yahoo.com)

Ե-09/14

14 օգոստոս

ՀՀ Տարածքային կառավարման նախարարության

Ջրային պետական կոմիտեի նախագահ

Անդրանիկ Անդրեասյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Անդրեասյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

- Ի՞նչ սկզբունքով, ո՞ր օրենքի, ո՞ր կետով կամ ի՞նչ որոշման հիման վրա է թույլատրվել Արփա-Սևան թունելից Եղեգիս գետ բաց թողնել ջրաքանակ (հիմքերը՝ <https://www.youtube.com/watch?v=0Bt2UK4mxGs> հղումով):
- Որքա՞ն ժամանակ է, որ Արփա-Սևան թունելից Եղեգիս գետ ջուր է բաց թողնվում, խնդրում ենք տրամադրել 2010-2014 թվականին Եղեգիս գետ բաց թողնված ջրի ծավալի մասին տվյալներ ըստ ամիսների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյան